

ԼԻԼԻԹ ԶԵԼԻՄԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՅԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԾԲՋԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

(Գրախսանական պրոֆեսոր Ս. Ծաղիկյանի «Հակակոռուպյիոն ռազմավարությունը քրեակատարողական հիմնարկներում» աշխատության վերաբերյալ)

Հայաստանի Հանրապետության նախագահ Ս. Սարգսյանի նախընտրական ծրագրում հատուկ նշված է. «Արդար պետությունը ... պետք է նպատակային և հետևողական գործողություններով կանխի կոռուպյիան»:

Հանրապետության դեկավարի ծրագրային այս դրույթից բխում է, որ կոռուպյիան այնախի հասարակական վտանգ է ներկայացնում, որ դրա դեմ պայքարը պետք է լինի պետական ցանկացած օդակի, հասարակական կյանքի տարրեր բնագավառներում ընդգրկված յուրաքանչյուր քաղաքացու ամենօրյա հոգածության նյութը, քանի որ այդ արատավոր երևույթի գոյությունը դանդաղեցնում է մեր առաջնաբացը, արգելակում նախաձեռնություններն ու ծրագրերը, որոնք դրված են պետության առջև: Հետևաբար ամեն ոլորտում, կոնկրետ հանգամանքներից ելնելով, պետք է ձեռնարկվեն հատուկ ու նպատակուղղված միջոցառումներ՝ այդ արատավոր երևույթը կանխարգելելու ուղղությամբ: Այս ծրագրային դրույթներին է միտված պրոֆեսոր Ս. Ծաղիկյանի կողմից հրատարակված «Հակակոռուպյիոն ռազմավարությունը քրեակատարողական հիմնարկներում» մեծածավալ աշխատությունը, որը լույս է ընծայվել վերջերս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի գիտական խորհրդի և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի խմբագրային հրատարակչական խորհրդի որոշումներով:

Աշխատության մեջ հիմնավորվել է ուսումնասիրության արդիականությունն ու գիտական վերլուծության անհրաժեշտությունն այն մեկնաբանությամբ, որ կոռուպյիայի համակարգային բնույթն ինքնին պայմանավորում է դրա գոյությունը նաև քրեակատարողական հիմնարկում:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Քրեակատարողական ծառայության մասին», «Ձերբակալվածների և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքները, Քրեակատարողական ծառայության կարգապահական կամոնակարգը և այլ նորմատիվ ակտեր, որոնք հիմք են ծառայում նշված բնագավառում օրինականության և իրավակարգի ամրապնդմանը և այդ ծառայությունում տեղ գտած արատավոր դրսերումների վերացմանը: Այս ամենի առկայության պայմաններում դարձյալ օրակարգի հարց է մշակել իրականությունից բխող քաղաքականություն, որը միտված պետք է լինի քրեակատարողական հիմնարկներում կոռուպյիայի հակագդման, կանխարգելման ու վերացման խնդիրներին:

Աշխատության մեջ դրված գիտագործնական պարզաբանումներն արժանի են ուշադրության այն առումով, որ հասարակական կյանքում հանդիպող բացասական երևույթների վերհանումն ու դրանց լուծման համար հեղինակի կողմից արված առաջարկություններն ամբողջովին նպատակա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ուղղված են հակակոռուպցիոն ռազմավարության կատարելագործմանը, ոխսկային երևոյթների նվազմանը, հասարակության զարգացմանը, յուրաքանչյուր պաշտոնատար անձի գործունեության մեջ օրենքի և օրինականության գիտակցման հիմնարար սկզբունքների անշեղ կատարմանը։ Այս ամենն ի վերջո միտված է կոռուպցիոն երևոյթների բացահայտմանը, քանի որ դրանց այս կամ այն չափի գոյությունն արգելակում է երկրի զարգացումը, աղավաղում այն հավակնութ նպատակները, որոնք ծրագրվում են իրականացվել մեր երկրի գործադիր, օրենսդիր և դատական մարմինների կողմից։ Աշխատության մեջ թվարկված են կոռուպցիայի դեմ պայքարի մարմիններն ու նրանց լիազորությունները, այդ մարմինների գործունեությունը։

Անդրադառնալով քրեակատարողական համակարգի արդյունավետ և գիտական գործունեությանը խոչընդոտող պայմաններին ու պատճառներին՝ առաջարկվում է կատարելագործել քրեակատարողական օրենսդրությունը՝ սահմանելով կոռուպցիայի կանխարգելման մի շարք հիմունքներ, այդ թվում այդ մարմինների գործունեության իրավական հստակ կանոնակարգում, դրանց ամենօրյա աշխատանքում օրինականության ամրապնդում, իրավարակայնության էլ ավելի կատարելագործում, պետական և հասարակական հսկողության ապահովում, համակարգի կառուցվածքի, բնագավառում ընդգրկված կադրերի հետ տարվող աշխատանքի, նրանց օրինական շահերին ու իրավունքներին վերաբերող որոշումների արդիականացում, համակարգի աշխատակիցների իրավասությունների, պարտականությունների, սոցիալական երաշխիքների, լիազորությունների շրջանակի հստակեցում, նրանց և նրանց ընտանիքների անդամների արժանապատիվ ապրելակերպն ապահովող նյութական կայուն երաշխիքների ու արտոնությունների հաստատում, ծառայողների պաշտոնեական լիազորությունների կատարման ընթացքում իրենց վրա դրված պարտականությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման, պաշտոնեական լիազորությունների սահմանագանցման և այլ հակաիրավական դրսևորումների դեմ տարվող պայքարի անխուսափելիություն։

Աշխատության մեջ հստակ նախանշվում են այս համակարգի կազմակերպչական բնույթի միջոցառումները, համակարգի կատարելագործման ուղղություններն ու դրանց կյանքի կոչման հնարավորությունները։

Հանրությանը ներկայացված աշխատությունը հագեցած է լավագույն դատողություններով, ապագային սևեռված խորը և մտահոգ ցանկություններով՝ օժտված արդիականությամբ, գործնական նշանակությամբ, որը կարող է օգտակար լինել ոչ միայն քրեակատարողական հիմնարկների, այլ նաև կառավարման, սոցիալական, իրավական և այլ ոլորտներում ընդգրկված աշխատակիցների, ուսանողների, գիտնականների և, ընդհանրապես, հասարակական կյանքի սուր ու զգայուն խնդիրներով հետաքրքրվող անձանց համար։ Այդ առումով միանշանակ կարող ենք փաստել, որ աշխատությունն ինչ-որ չափով նպաստ կրերի այն կարևոր խնդրի լուծման աշխատանքներին, որոնք որդեգրվել են մեր երկրի քաղաքական դեկավարության կողմից ամենավտանգավոր ու տարածված երևոյթներից մեկի՝ կոռուպցիայի դեմ՝ բարձրացնելով այդ պայքարի արդյունավետությունն ու անշրջելիությունը, որը, անշուշտ, կնպաստի ապահով հայրենիքի հիմքերի ամրապնդմանը։

Աշխատությունը տպագրվել է 2012 թվականին, այդուհանդեռ նրանում (էջ 185) նշվում է, որ «... հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնող մարմինների զարգացումը 2009-2012 թվականներին միտված է լինելու դրանց հետագա ինստիտուցիոնալ զարգացմանը, գործունեության համակարգմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների համագործակցության ապահովմանը»։ Ստացվել է այնպես, որ հեղինակի եզրահանգումները հակակոռուպցիոն ռազմավարությունը մշակելու հարցում ոչ թե եկող տարիների մարտահրավերներն են կանխորոշում, այլ արդեն ժամանակի առումով՝ անցյալ հանգամանքները։

Ինչ-որ չափով աշխատությունը գուցե և շահել է, որ նրանում դրված է կառավարման, տնտեսության առաջնային ոլորտներում և ճյուղերում, քաղաքական ու տնտեսական կյանքի տարաբնույթ այլ բնագավառներում հակակոռուպցիոն քաղաքականության լուսաբումը, սակայն ցանկալի կիներ բերել վիճակագրական տվյալներ այդ բնագավառներում տիրող վիճակի, քարելավման տես-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դենցների, իրականացվող հակակոռուպցիոն գործունեության առավել խոցելի տարրերի վերլուծության մասին:

Նշված դիտարկումների ընդգրկումը առավել արդյունավետ կրաքանչեր մենագրության հասարակական հնչեղությունը, որի նպատակը, վերջին հաշվով, երկրում իրավախախոռումների և հանցագործությունների կանխարգելումն է, դրանց գոյության պատճառների ու պայմանների վերհանումն ու հանցավորության դեմ անզիջում պայքարի կազմակերպումը: